Տարեգրքում հոդվածների հրատարակման կարգը

Ներկայացվող հոդվածների ծավալը չպետք է գերազանցի 16 էջից, գրախոսությունների ծավալը՝ 8 էջից։

Հոդվածները ներկայացվում են 2 օրինակից, մեքենագրված, հայերեն լեզվով, ամփոփումը՝ ռուսերեն (մոտ (1/2 էջի սահմաններում), ծանոթագրությունները և հղումները ամփոփումից հետո՝ հաջորդական համարակալումով, վերջում՝ տվյալներ հեղինակի մասին (ազգանուն, անուն, հայրանուն (լրիվ), գիտական աստիճանը, կոչումը, աշխատավայրը և պաշտոնը, հասցեն, տան և աշխատավայրի հեռախոսի համարները, ՍՍՀՄ փիլիսոփայական ընկերության անդամատոմսի համարը)։

Հոդվածները խմբագրական կոլեգիային են ուղարկվում բուհական ամբիոնների կամ ինստիտուտների համապատասխան բաժինների երաշխավորությամբ։ Հոդվածների հետ միասին ներկայացվում է նաև տեղեկանք աշխատավայրից՝ տվյալ հոդվածի պլանային կամ արտապլանային լինելու մասին։

Հոդվածի 1-ին էջի վերին աջ անկյունում գրվում է հեղինակի անվան և հայրանվան սկզբնատառերը, ազգանունը (գլխատառերով), այնուհետև՝ հոդվածի վերնագիրը (գլխատառերով)։ Հայերեն տեքստից անմիջապես հետո ռուսերեն լեզվով գրվում է հեղինակի անվան և հայրանվան սկզբնատառերը, ազգանունը (գլխատառերով), հոդվածի վերնագիրը (գլխատառերով), որից հետո՝ ամփոփումը։

Ծանոթագրություններում և հղումներում որևէ հեղինակի միևնույն աշխատությունը (եթե տվյալ հեղինակից այլ աշխատություններ չեն հղվում) կրկնվելիս երկրորդ և հաջորդ դեպքերում գրվում է՝ «նշվ. աշխ.»։ Մարքսիզմ-լենինիզմի դասականների աշխատություններից քաղվածքները մեջբերվում են ռուսերեն վերջին հրատարակությունից, իսկ եթե կա հայերեն թարգմանությունը, ապա՝ այդ թարգմանության վերջին հրատարակությունից։ Հոդվածներում օգտագործված քաղվածքները, փաստերը պետք է ստուգված լինեն հեղինակների կողմից, իսկ օտար լեզուներով հղումները՝ մեքենագրված։ Եթե տեքստում հիշատակվում է արտասահմանյան հեղինակի ազգանուն, ապա փակագծերում վերջինս նշվում է նաև սկզբնաղբյուրային լեզվով։

Այս բոլոր պայմաններին չհամապատասխանող ձեռագրերը կվերադարձվեն հեղինակներին։